

ՄԱՄԻԿՈՆԵԱՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ ԽԱՂԲԱԿԵԱՆՆԵՐԻՆ ԱՌՆՁՈՂ ՏԵՍԱԿԷՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ

ԱՐՄԷՆ ՔԷՇԻՇԵԱՆ

Հայկազեան Հայագիտական Հանդէսի ԺԹ հատորում (1999) տպագրուել է աւաղ արդէն հանգուցեալ պատմաբան Ռաֆայէլ Մաթեոսեանի ՎՄԻԿԵԱ Խորենացու Վկայութիւնները Մամիկոնեան-Խաղբակեան Տոճմի Մազման Մասին՝ վերնագրով յօդուածը՝ Կարեւորելով հայ ազնուական տոհմերի ծագման խնդիրը՝ Հեղինակը գտնում է, որ դրա վերաբերեալ արտայայտուած կարծիքներից շատերը հնացել են և վերանայման կարիք ունեն։ Ըստ Մաթեոսեանի, նորովի մեկնաբանման և ճշտման կարիք ունի նաև նախարարական հին տներից մէկի՝ Մամիկոնեանների ծագման հարցը, որին էլ ինքը ձեռնամուխ է լինում։

Յաւօք, ողջ աղ յօդուածում առկայ են տարբեր հարցերի վերաբերեալ մեծ ու փոքր մի շարք անճշտութիւններ, ինչպէս և ոչ խորքային մտեցումներ, փաստերի հակասական մեկնաբանութիւններ են՝ արդիւնքում յանգնելով սխալ եզրակացութիւնների։ Ուստի, ստիպուած ենք առանձին-առանձին անդրադառնալ դրանց հնարաւորինս մեծ մասին։ Առանձին բացայայտ անճշտութիւններին անդրադառնալու անհրաժեշտութիւնը զգարուում է նաև այն պատճառով, որ դրանց մի մասը Հեղինակի մօտ բազմիցս արդէն կրկնուել է՝ նպաստելով թիւրիմացութիւնների ամբողջականը։

Այս յօդուածն արդէն պատրաստ էր, երբ ցաւով իմացանք, որ Ռաֆայէլ Մաթեոսեանը մահացել է։ Այս յօդուածի Հեղինակը դիտակցում է, որ Մաթեոսեանի ստորեւ ներկայացուող վիճարկելի դրոյթների վերահանումը, որոնք երբեմն մտնում են մանրամասնութիւնների մէջ, առաջին հերթին հասցէազրուած էին դրանց Հեղինակին և թերևս ակնկալելի էր նրա արձագանգը։ Այդուհանդերձ, գտնում ենք անհրաժեշտ հրապարակել այս յօդուածը՝ յետագայ թիւրիմացութիւններից զերծ մնալու համար։

ՄԱՄԻԿՈՆԵԱՆՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՊԱՏՄԱՅՐՈՒԹԻՒՆԸ

Մէջբերելով Ե. դարի պատմահայր Մովսէս Խորենացու մօտ առկայ Մամիկոնեանների ծագման աւանդութիւնը, թէ Մամիկոնեանները Հայաստան են եկել Ճենաստանից, Մաթեոսեանն այնուհետև նշուած յօդուածում ներկայացնում է Մամիկոնեանների ծագման վերաբերեալ մի

չարք ուսումնասիրողների կարծիքներ՝ ցաւօք ոչ-միշտ եհլտ արտացոլի-
լով նրանց տեսակէտը, ինչի հետեւանքով աղճատուել է Հարցի պատմագ-
րութիւնը:

Մաթեւոսեանի կարծիքով՝ ճառաջինը գիտնականներից Հարցին անդ-
րադարձել են Հ. Միքայէլ վրդ. Չամչեանն ու Հ. Ղուկաս վրդ. Ինճիճեանը:
Նրանք առանց վերապահութեան ընդունում են Խորենացու Հաղորդումը
Մամիկոնեան տոհմի ծագման մասին» (էջ 93): Մինչդեռ դեռեւս Ինճիճեա-
նից առաջ՝ 1819ին Հարցին անդրադարձել է Փրանսիացի յայտնի Հայագէտ
Ժան Սէն-Մարտէնը՝ Վերջինս առանձնաշատուկ ուսումնասիրութեան է
ենթարկել միջնադարեան Հայ ազնուական տոհմերից Օրբելիանների ծագ-
ման խնդիրը, միաժամանակ քննութեան առնելով նաեւ Մամիկոնեանների
ծագման հարցը, ընդ որում Համեմատաբար աւելի Հանգամանօրէն քան
Չամչեանը՝ ևս Ինճիճեանը՝ Ի դէպ, Սէն-Մարտէնը գտնում է, որ Մամի-
կոնեանները, ինչպէս և Օրբելիանները, ունեն չինական ծագում:

Բացի այդ, Մաթեւոսեանի նման ներկայացմամբ ալտեղ ստուերի
տակ է մտում Չամչեանի ուրոյն տեսակէտը: Եթէ Ինճիճեանը, աւանդու-
թիւնն ընդունելով առանձին մեկնաբանութիւն չի անում, այսպէս Չամչեա-
նը ներկայացնում է միանգամայն որոշակի տեսակէտ: Մամիկոնեանների
նախահայրների ձեռնաստանը նա տեղադրում է Քի ներքին կողմն արեւե-
լից ասիո՝ ընդ մեջ սկիւթացւոց և չինէացւոց: Միաժամանակ, նա Հայկա-
կան որոշ այլ աղբիւրներում յիշատակուող ձեռնաց երկիրը տեղադրում է
ճառ սահմանօք Հոնաց և Հեփթագաց՝:

Ներկայացնելով յայտնի Հայագէտ Նիկողայոս Աղոնցի տեսակէտը,
Մաթեւոսեանը գրում է, որ նա 1901ին գրած իր մի ուսումնասիրութեան
մէջ Հայն կարծիքն է յայտնել, որ Մամիկոնեանները եկել են ձեռնաստանից,
Հաւանական Համարելով ձեռնաստանը նոյնացնել Ձինաստանի հետ» (էջ
93): Իրականում, մեծանուն գիտնականը միանգամայն այլ կարծիք է
յայտնել: Յիշեալ աշխատութիւնում, Աղոնցը, ձեռնաստանը նոյնացնելով
Ձինաստանի հետ, ընդհակառակն, Մամիկոնեանների այնտեղից զայլ քիչ
Հաւանական է Համարում ևս փորձում առաջարկել այլ լուծումներ: Նա
գրում է: «Եթէ քիչ Հաւանական է չինական ծագումը, այսպէս ևս պար-
տադիր չէ: Բազմաթիւ ցեղեր և ժողովուրդներ էին ապրում Հայերի Հա-
րեւանութեամբ՝ արեւելքում. երկպառակչական խռովութիւնների հետե-
ւանքով որեւէ իշխանական տոհմ կարող էր մղուել Հայաստան»: Այնու-
հետեւ, Մաթեւոսեանը, շարունակելով Աղոնցի մասին խօսքը, գրում է:
«Սակայն մի քանի տարի անց, 1908ին լոյս տեսած մի այլ աշխատութեան
մէջ, նա ձեռնաստանը տեղադրել է Մանիկա-Ջանիքում, ճեներին նոյնաց-
նելով Ծաների հետ» (էջ 93): Այս դէպքում եւս սկանաւոր Հայագէտի տե-

սակէտը ճիշտ չէ հասկացուած: Աղոնցը ձինաստանի տեղադրութեան հարցում իր տեսակէտը չի փոխում՝ այստեղ եւս յստակ նշելով, որ աւանդութիւնում յիշատակուող «ձինաց աշխարհի» տակ խօսքը Ձինաստանի մասին է: «Երա տակ պիտի հասկանալ Պարսկաստանից արեւելք՝ Բալխից այն կողմն ընկած երկրներից մէկը, այսինքն՝ Ձինաստանը: Մամիկոնեանների ենթադրեալ նախահայրերը՝ Մամիկը եւ կոնակը, ըստ աւանդութեան, որդիներն էին մի նշանաւոր իշխանի, որը թագաւորից յետոյ առաջին ղէմքն էր ձինաստան-Ձինաստանում», - գրում է նա: Աւանդութեան վերհիմամասի շուրջ խօսելիս, Աղոնցը կրկնում է, որ, ըստ աւանդութեան, «Մամիկոնեանները Ձինաստանից եկան»¹⁹: Նոյն միտքը նա կրկնում է նաեւ փոքր ինչ անց: Նա գտնում է սակայն, որ շփոթ է տեղի ունեցել սկզբնապէս խօսք է դնացել ոչ թէ հեռաւոր ճեների, այլ Հարեւան ճաների մասին, որոնցից էլ ինքը սերուած է համարում Մամիկոնեաններին, եւ յետոյ է, որ աւանդութիւնը կապուել է ճեն-չինացիների հետ: Մասնաւորապէս նա գրում է. «Աւանդութեան մէջ յիշուած ձինաց աշխարհի մեկնաբանութեան շուրջը թիւրիմացութիւն կայ: Նախնական աւանդութեան մէջ ճենք սանելով հասկանում էին ոչ թէ հեռաւոր չինացիներին, այլ Հարեւան ծաներին, որոնք ապրում էին Մամիկոնեանների տոհմական կալուածքից՝ Տալքից, ոչ հեռու: Ըստ Խորենացու վկայութեան, Հայերը ծաներին կոչում էին ճան, ձանիք, այժմ Չանիք»²⁰:

Քիչ անց, խօսելով Հ. Ներսէզ Անդրիկեանի կարծիքի մասին, Մաթեւոսեանը նշում է. «Ընդհանրապէս առանց որեւէ ապացոյցի, վարդան, վասակ, վաչէ անունները համարում է իրանական եւ դրա հիման վրայ տոհմին վերագրում է իրանական ծագում» (էջ 98): Եթէ Մաթեւոսեանն, ի տարբերութիւն մի շարք լեզուաբանների, այդ անուններն իրանական չի համարում, դա այլ Հարց է, բայց Անդրիկեանն ապացոյց բերում է: Նա վկայակոչում է ժամանակի նշանաւոր լեզուաբան Հայրիխ Հիւբշմանին՝ յիշելով նրա Հայերէնի Քերականութիւն (Մաս Ա., հ. Ա.) աշխատութիւնը: Ընդ որում, Անդրիկեանն այս շարքում վաչէ անունը չի նշում (որն, ի դէպ, Հիւբշմանն իրանական անունների մէջ չի դասում), այլ աւելացնում է Համազասպ եւ Արտաւազդ անունները²¹: Իսկ եթէ Անդրիկեանին ուղղուած շարանց որեւէ ապացոյցի արտայայտութիւնը վերաբերում է նրա եզրակացութեանն ընդհանրապէս, ապա դա եւս արդարացուած չէ: Անդրիկեանը միայն յիշեալ անձնանունների հիման վրայ չէ, որ փորձում է Մամիկոնեաններին իրանական ծագում վերագրել, այլ բերում է իր կարծիքով աւելի լուրջ մի ապացոյց, որը Մաթեւոսեանի ծօռ անտեսուել է: Անդրիկեանը գտնում է, որ Մամիկոնեանների անձնանուններից զատ «Բիւզանդի կտոր մը յայտնի կ'որոշէ իրենց ծագումը»²²: Ե. դարի Հայ

պատմիչ Փաւստոս Բուզանդը Հաղորդում է, որ Պարսից Շապուհ Բ. (308-378) թագաւորը Հայաստան պատերազմի է ուղարկում զգիւնական նահապետ, որ տունիկ իսկ էր ազգաւ տունիկն զօրավարացն Հայոց՝ այս ինքն Մամիկոններից: Սակայն, Հայոց սպարապետ Վասակ Մամիկոնեանը շահաւորաբար սատակէր զգորսն ամենայն Պարսից, սպանանէր զիւր զազգային զգիւնական նահապետն²⁴. Սա է Անդրիկեանի գլխաւոր փաստարկը:

Շարունակելով տեսակէտների ներկայացումը, քիչ անց, Մաթեոսեանը գրում է. «Հ. Սահակ վրդ. Կողեանի կարծիքով կամարականներն ու Մամիկոնեանները միաժամանակ զաղթել են Հայաստան Բակուրիայից Տրդատ Բ-ի կամ Քոսրով Ա-ի օրօք, պարթեւ Արտաւան թագաւորի մահից (224թց) յետոյ նոյն կարծիքին են նաեւ Գէորգ Աւյանն ու Ժողովք Լորանք» (էջ 93): Մի կողմ թողնելով, որ այսպէս կարող է սպաւորութիւն ստեղծուել թէ Կողեանն իր կարծիքն անելի վաղ է արտայայտել, իսկ միւսները հետեւել են նրան²⁵, հարկ է նշել, որ Աւյանն ու Կողեանը նշուած ժամանակի հարցում նոյն կարծիքին չեն: Աւյանը Բակուրիայից կամարականների եւ Մամիկոնեանների զաղթը դնում է պարթեւ Արշակունիների անկումից առաջ²⁶, իսկ Կողեանը, մերժելով նրա այս մօտեցումը, զաղթը դնում է դրանից յետոյ²⁷:

Փոքր ինչ անց, Մաթեոսեանը գրում է. «Քորենացուն յայտնի եղած աւանդութեան համաձայն Մամիկոնեանների նախահալը եղել է մէկ մարդ՝ Մամզունը, այնինչ Ազաթանզեղոսի յունարէն թարգմանութեան մէջ երկուսն են՝ Մամիկ եւ Կոնակ» (էջ 94): Սակայն ո՛չ Ս. դարի հայ պատմիչ Ազաթանզեղոսի յունարէն թարգմանութիւնում²⁸ եւ ո՛չ նրա մէկ այլ պայմանականօրէն «Վարք» կոչուող խմբագրութեան յունարէն թարգմանութիւնում²⁹ Մամիկի եւ Կոնակի մասին, եւ ընդհանրապէս Մամիկոնեանների Հայաստան դալու մասին, որեւէ խօսք չկայ: Այդ մասին խօսք չկայ նաեւ Ազաթանզեղոսի հայերէն ընագրում, ինչպէս եւ նրա կամ «Վարք»-ի այլաիզու. թարգմանութիւններում: Ընդհակառակն, յունարէն «Վարք»-ն, օրինակ, նպաստում է Մամիկոնեանների աւանդութեան որոշ տուեալների արժանահավաստութիւնը մերժելու³⁰:

Մաթեոսեանի ժառ շփոթն ակներեւարար տեղի է ունեցել բանասէր Գէորգ Արզարեանի ուսումնասիրութիւնը ոչ-ճիշտ ընկալելու հետեւանքով, որտեղ մատենագէտը Մամիկոնեանների առնչութեամբ, սակայն տարբեր առիթներով, մի կողմից խօսում է Ազաթանզեղոսի «Վարք»-ի յունարէն թարգմանութեան մասին, միւս կողմից՝ իր առաջ քաշած այն կարծիքի մասին, թէ Մամիկոնեանների աւանդութիւնը եւս նախապէս դրանցուած է եղել Ազաթանզեղոսի անուամբ՝ դեռեւս Մար-Աբասեան

մատնանում, որտեղից էլ միջնորդաւորուած ճանապարհով տեղ է գտել Էդարի Հայ պատմիչ Սերէոսին կից Անանուհի մօտ²⁰ :

Ի դէպ, խօսելով Արզարեանի տեսակէտի մասին, Մաթեոսեանը գրում է, որ Էդրա կարծիքով Բուզանդի Հայոց պատմութեան առանձին տեղեկութիւններից երևում է, որ Մամիկոնեանները Հայաստան են եկել Տրդատ Բ-ից շատ առաջ, Հայ Արշակունի առաջին թագաւորների օրօք» (էջ 93-94)։ Մինչդեռ Արզարեանը Մամիկոնեանների գալու ալալիսի ստույգ ժամանակ չի նշում, այլ գրում է, որ, ըստ Բուզանդի, առաջին Արշակունիները դիտէին Մամիկոնեաններին²⁰, ինչպէս նաեւ նշում է, թէ պատմագիտութեան կողմից պարզուած է, որ Մամիկոնեանները Հայաստանում Հաստատուել են Խոսրովից եւ Տրդատից շատ առաջ²⁰ :

Շարունակելով տեսակէտների ներկայացումը՝ Մաթեոսեանը, վկայակոչելով կովկասագէտ Կիրիլ Թումանովի մի յօդուածը, գրում է․ «Կիրիլ Թումանովը Մամիկոնեաններին վերագրում է ճենական ծագում, Հիմք ընդունելով Բուզանդի տեղեկութիւնները» (էջ 94)։ Մինչդեռ, իրականում Թումանովը մերժում է Մամիկոնեանների ճենական ծագումը, ձեռնաստանը Համարելով Չինաստանը, եւ ընդունելի է Համարում Մամիկոնեանների ճանական (ծանական) ծագման տեսակէտը՝ մասնաւորապէս գրելով․ «Ձի կարող լուրջ կասկած լինել, որ Մամիկոնեանների աւանդութիւնը վերաբերում է Չինաստանին, բայց դա չի նշանակում, որ աւանդութիւնը պէտք է ճիշտ լինի»։ Ապա, Հաւանական Համարելով Աղոնցի կարծիքը, Թումանովը նաեւ նշում է․ «Իրիւս Մեծ Հայքի թագաւորութիւնում Տայքի՝ Հայ-վրացական սահմանամերձ շրջանի առում, Մամիկոնեանները միանգամայն Հնարաւոր է ունէին կամ պրոտօ-վրացական, ճանական ծագում կամ առնուազն ազդուած էին ճանական տարրից»²⁰ : Իսկ Բուզանդի, ինչպէս եւ այլ պատմիչների, տեղեկութիւնները Թումանովը Հիմք է ընդունում Մամիկոնեանների աւանդութիւնը եւ այլ Հարցեր ներկայացնելիս Մամիկոնեանների ծագման մասին Թումանովը նմանատիպ մի կարծիք արտայայտել է նաեւ աւելի վաղ գրած իր մի աշխատութիւնում²⁰ :

Այնուհետեւ, Մաթեոսեանը գրում է․ «Պայատուր Վէմեանը ձեռնաստանը տեղադրում է Բակտրիայում (այժմ՝ Բալի), Հաւաստի Համարելով Խորենացու տեղեկութիւնը Մամիկոնեանների դադմի մասին» (էջ 94)։ Այստեղ ստացւում է, որ ձեռնաստանը՝ Բալիսի նման, քաղաք է։ Մինչդեռ, Վէմեանը պարզորոշ նշում է, որ «Բակտրիան (այժմու. Բալիքը)՝ Բակտրիա երկրի «մայրոստանն» էր²⁰, այսինքն Համանուն մայրաքաղաքը, ինչն արտացոլում է իրական պատկերը

Ներկայացրած տեսակետների մասին (որոնցից մի քանիսը չիդատակեցինք) իր խօսքն ամփոփելով՝ Մաթեոսեանը գրում է. «Այսպիսով, Հայ բանասիրութիւնը, յենուելով Պորրենացու, ինչպէս նաեւ Ազաթանգեղոսի, Սերէոսի, Բուզանդի տուեալների վրայ, Մամիկոնեաններին համարում է եկուտը ձեռնաստանից, անկախ նրանից, թէ որտեղ է տեղադրոււմ ձեռնաց աշխարհը» (էջ 96):

Նախ՝ քանի որ ինչորոշ առարկայ հարցը քննուել է ոչ միայն բանասիրութեան, այլեւ պատմագիտութեան կողմից, ուստի այստեղ Հարկ էր ասել զպատմաբանասիրութիւնն կամ «Հայագիտութիւնն»:

Երկրորդ՝ համաձայն առաւել տարածոււմ գտած տեսակէտի, Մամիկոնեանների ծագման մասին հաղորդում է ոչ թէ Սերէոսը, այլ նրան կից Անանուսը, ինչը ինքը՝ Մաթեոսեանը հաստատել էր իր նախկին աշխատութիւններում: Սրան է առնչոււմ նաեւ Ազաթանգեղոսի հետ կապուած վերոնշեալ սխալի կրկնութիւնն այստեղ, որի հետեւանքով Մամիկոնեանների աւանդութիւնը հաղորդող վաղ շրջանի երեք հիմնական աղբյուրները հեղինակի մօտ դարձել են չորսը:

Բացի այդ, իր թուարկած տեսակէտների հիման վրայ եւ առանց ծանօթ լինելու մի շարք այլ ուսումնասիրութիւնների, Մաթեոսեանն ամբողջ Հայ բանասիրութեանը ներկայացնում է Մամիկոնեաններին ձեռնաստանից եկուտը համարող, մինչդեռ ինքն իսկ նախորդ շարադրանքում նշում է, որ Անդրիկեանն ու պատմաբան Հ. Կարապետ Վրդ. Տէր-Մահակեանը Մամիկոնեաններին վերագրում են իրանական ծագում՝ մերժելով ճննական ծագման աւանդութիւնը²⁰: Մաթեոսեանը նաեւ չի անդրադարձել այս հարցին նուիրուած մեր թղթաւածին եւ զեկուցումներին, որտեղ մենք եկել էինք այն եղբակացութեան, որ Մամիկոնեաններն ունեն տեղական Հայկական ծագում²¹:

ՄԱՄԻԿՈՆԵԱՆՆԵՐԻ ԵՒ ԽԱՂԲԱԿԵԱՆՆԵՐԻ ԱԶԳԱԿՑՈՒԹԵԱՆ ՎԱՐԿԱՄԸ

Այնուհետեւ Մաթեոսեանը խօսում է Հայ միջնադարեան ազնուական սոսնձերից Պաղբակեանների մասին. Ներկայացնելով ԺԱ. դարի Պաղբակեանների մասին եղած լիդատակութիւնների առանձին օրինակներ՝ նա գրում է. «որ. Դիէն Պաղբակեանը 1040ական թթ. բնակոււմ էր Միւնիքի Հարանդ գաւառում» (էջ 96): Սակայն Դիէն Պաղբակեանն իրականում տիրոջներ ունէր Միւնիքի ոչ միայն Հարանդ, այլեւ Միւս Բաղք (Քաշունիք) եւ Ծղուկ գաւառներում²²: Մաթեոսեանի մօտ առկայ թիրիմացութիւնն ակնյի յատակ է երևոււմ նրա նախորդ որոշ աշխատութիւններից, որոնցից մէկում, օրինակ, նա գրում է, որ «Միւնիքի Հարանդ գաւառում XI դ. կէսերին (1046) տիրոջներ ունէր Դիէն Պաղբակեանը (Սոսո,

Վժանիա, Բոլորաքար)՝ Մինչդեռ, եթէ Խոսքը գտնուում էր Հաքանդում, ապա Վժանիսը (Վժանիք)՝ Միւս Բաղքում (Քաշունիք) էր, իսկ Բոլորաքարը (Գլխին էր պատկանում սրա Վնորեաց բաժինը)՝ Նորիք գիւղի Հետ, գտնուում էր Մզուկում: Սրանց տեղադրութիւնը (րացի Բոլորաքարից) յստակ երեւում է ԺԳ-ԺԴ. դարերի պատմիչ Ստեփանոս Օրբելեանի բերած Հարկացուցակից՝²⁸

Այնուհետեւ, գրելով, որ, ըստ իր կարծիքի, Խաղրակեաններն ազգակից էին Մամիկոնեաններին, Մաթեւոսեանը նշում է, որ Զաջուս Խաղրակեանի դուստր Վանենին 1282ին իր պատուիրած մի ձեռագրի յիշատակարանում անուանում է զգուստր բարեպաշտ իշխանին Զաջուս, որդոյ Խաղրակայ թոռն Բակ իշխանին» (էջ 96): Այս յիշատակարանում որպէս տոհմի նահապետ նկատի է առնուած Աւարայրի ճակատամարտի (481) մասնակից Բակ իշխանը՝, որին յիշատակում է նաեւ Ծ. դարի պատմիչ Ծղիշէն՝, իսկ, քիչ անց, Մաթեւոսեանը նշում է, որ 1322ին Կուքի վանքում գրուած մի ձեռագրի յիշատակարանում ասուած է, որ այդ ձեռագիրը գրուել է Վի իշխանութեան նահանգիս մերոյ թոռին Պուշա, զոր ի յազդէն Վարդանանց՝ Վասակայ՝, նա գրում է, որ Վայս Հաղորդումից բխում է, որ Պուշը եւ նրա տոհմակիցները Վարդանանց ազգից», այն է՝ Մամիկոնեանների տոհմից էին» (էջ 97): Հարցի առնչութեամբ, անդրադառնալով Հայազէտ կաթողիկոս Գարեգին Ա. Յովսէփեանի կարծիքին, Մաթեւոսեանն իր նախորդ մի յօդուածում գրում էր, որ ըստ Յովսէփեանի, Վասակի տոհմը կոչուել է Վարդանանց թերեւս Բակի՝ Վարդանանց իշխաններից լինելու պատճառով: Բայց Հեղինակը չի ճշտում, ինչ պէտք է Հասկանայ Վարդանանց իշխան ասելով Վարդան Մամիկոնեանի կողմնակից թէ տոհմակից՝²⁹

Այստեղ, սակայն, ինքնին Հասկանալի է, որ չգրելով Խաղրակեաններին Մամիկոնեաններից սերուելու մասին, Յովսէփեանը Վարդանանց իշխան ասելով նկատի ունի Վարդանի կողմնակից եւ ոչ՝ տոհմակից: Աւարայրի Հերոսներին ընդհանուր անուանով յաճախ կոչում էին Վարդանանց՝³⁰ Հայաստանեայց Սկիզբցու կողմից սահմանուած Համապատասխան սօսը եւս կոչում է Վարդանանց: Եղիշէն նոյնպէս Բակին Մամիկոնեանների ազգակից Համարելու որեւէ հիմք չի տալիս: Պատմիչը նրա մասին արտայայտուած է միայն Հետեւեալ կերպ. Վի ոմն ի քաղ զօրականէն Հայոց ... Բակ անուն»՝ Մամիկոնեանների Հետ ազգակցութեան հիմք չի տալիս նաեւ Բակի մասին պատմող Վանենու վերոնշեալ յիշատակարանը:

Խօսելով պարսիկների կողմից պաշարուած մի ամրոցից Բակի փախուստի մասին՝ Մաթեւոսեանը գրում է, որ Վրակի փախտապալարը

յայտնի է վանեհու յիշատակարանից՝ Հաւապտուկ վանք, որը ըստ իր իսկ վկայութեան, Ջաջուռի եւ նրա նախնիների Երեսկան տունն էր եւ շիրիմը (էջ 87)։ Մինչդեռ, յիշատակարանը յայտնելով, որ Բակը փախաւ Էյաժուրան Արցախայր³⁸, Հաւապտուկ վանքն իբրեւ Բակի փախտաւայր չի նշում եւ չէր էլ կարող նշել, քանի որ Ծ. դարում Հաւապտուկ վանքը դեռեւս գոյութիւն չուէր։ Այն կառուցուել է 1183ին (ըստ այլ կարծիքի՝ 1283ին), դառնալով Խաղրակեանների տոհմական գերեզմանատունը³⁹։

Այնուհետեւ, ներկայացնելով Խաղրակեան եւ Մամիկոնեան իշխանական տների միջեւ ԺԲ.-ԺԳ. դարերում եղած առնչութիւնները՝ Մաթեոսեանը գրում է, որ դրանք պատահական չեն եւ ւժանանշում են երկու տոհմերի միջեւ ազգակցական կապերը, որոնք զայնս են դեռեւս Ծ. դ.։ Մեր կարծիքով Խաղրակեանները ծագում են Մամիկոնեան տոհմից, նրանց ճիւղերից մէկն են, եւ ԺԲ.-ԺԴ. դդ. կոչուել են «Խաղրակեանք» (էջ 87)⁴⁰։

Պէտք է նշել, որ երկու իշխանական տների միջեւ եղած կապերը Մաթեոսեանի կողմից ոչ միայն գերազնահատուած են, այլեւ չափազանցուած։ Օրինակ, նա բերում է Մամիկոնեանների տոհմական անունների գործածութիւնը Պուռչեանների մօտ։ Հեղինակը իր նախորդ մի յօդուածում թուել էր դրանք՝ Մամա եւ Խորիշաւ⁴¹, Սակայն, թէեւ այս անունները բաւական լայն տարածում ունէին, եւ Մամիկոնեաններից բացի կիրառուած էին նաեւ այլ տոհմերում (յատկապէս՝ Խորիշաւը), այս պարագայում Մաման ոչ թէ Պուռչեան էր, այլ նրանց հարսը (վասակի կինը, Պուռչի մայրը)⁴², իսկ վրչեալ Խորիշաւը ոչ մի տեղ չի յիշատակուած իբրեւ Պուռչեանների դուստր կամ անգամ հարս։

Բացի այդ, այստեղ, ինչպէս եւ հարցին նուիրուած նախորդ աշխատութիւններում, Մաթեոսեանի կողմից անտեսուել է այն Հանգամանքը, որ ԺԲ.-ԺԳ. դարերում վկայուած սերտ կապերը կարող են բացատրուել նաեւ երկու տոհմերի խնամիական կապերով։ Այսինքն՝ Հարաւոր է, որ Խաղրակեանները Մամիկոնեան լինէին միայն մայրական զծով, որն, ինչպէս այլ օրինակներից յայտնի է, իշխանական տոհմերին յաճախ հիմք էր տալիս իրենց սերուած Համարել մայրական այդ տոհմից⁴³ եւ անգամ իրենց վերագրել նրանց առանձնայատուկ բնորոշիչներ։

Փոքր անց, իբրեւ հիմնաւորում երկու տոհմերի ազգակցութեան, ներկայացնելով Խաղրակեանների արծուազատկեր գինանշանի նմանութիւնը Մամիկոնեանների գինանշանին, Մաթեոսեանը հաշուի չի առնում նաեւ այն Հանգամանքը, որ արծուի նշանը կիրառուած էր ոչ միայն Մամիկոնեանների եւ նրանց շառաւիղ Համազասպեան-Մամիկոնեանների եւ Օրբելեանների, այլեւ Մամիկոնեաններին ոչ ազգակից տոհմերի կողմից՝

ինչպես նախկինում, այնպես էլ ժԲ-ԺԳ դարերում եւ յետոյ Օրինակ, ինչպես ընդունում է նաեւ Մաթեոսեանը, ուսումնասիրողները գտնում են - ընդ որում մատնացոյց անկող հերալդիկ բարձրաբանդակները - որ արծիւը եղել է նաեւ Արծրունիների զինանշանը⁴⁵։ Կամ, օրինակ, ճանկող արծուաբանդակ է պատկերում 1207-22ին կառուցուած, վաճառականների հոգեւոր կենտրոն Խորանաշատի եկեղեցու ճակատին, որը համարւում է վաճառականների զինանշանը⁴⁶։ Բազմաթիւ արծուաբանդակներ կան Անիում, այդ թւում ճանկող արծուի պատկերով, ինչպէս օրինակ Անիի արտաքին պարսպի վրայ եւ Անիի պալատական եկեղեցում, որը - համաձայն նորագոյն ուսումնասիրութիւնների - կառուցուել է ո՛չ թէ նախարարատունեաց շրջանում՝ է- դարում, այլ ոչ վաղ քան Թ-Ժ դարերի սահմանագծում⁴⁷։ Արծուաբանդակներ յայտնի են նաեւ դեռեւս Պաղնիի, Աթենիի եւ այլ եկեղեցիներէ⁴⁸։ Հարկ է նշել նաեւ մի քանի այլ արծուաբանդակներ, որոնց թւում կան նւ պահպանել խորհրդանշաններ, նւ դի-նանշան համարուողներ, որոնք մասամբ դուրս են մնացել Մաթեոսեանի ուշադրութիւնից։ Արծուաբանդակ կայ, օրինակ, Տաթևի տաճարի Ժ-դարի սկզբում կառուցուած թմբուկի վրայ⁴⁹, Հասան Զալալ Դոլաթի կողմից 1218-38ին կառուցուած Գանձասարի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու թմբուկի վրայ⁵⁰, նաեւ Ազրակունիսի Ս. Կարապետ եկեղեցու ճակատին⁵¹ եւն։ Ճանկող արծուապատկեր է քանդակուած Զինջիրլուի Ս. Կարապետ եկեղեցու⁵², Եամբի Ս. Ստեփանոս Նախավկայի եկեղեցու վրայ⁵³ եւն։ Արծուի առանձին քանդակ կայ Ազարանի Աստուածորդկալ Եկեղեցում⁵⁴, ինչպէս յայտնի է նաեւ Մաթեոսեանին՝ վաչուտեան իշխանական տունի զինանշանը կաքաւ յաշտող արծիւ էր⁵⁵։ Այլ իշխանական տների զինանշաններ համարուող կաքաւ, ինչպէս նաեւ նապաստակ յաշտող արծուի բարձրաբանդակներ կան նաեւ Աղթամարի Ս. Պաշ եկեղեցու վրայ⁵⁶։ Օրկ-զլխանի արծուաբանդակներ կան Անիի արքունի պալատում գտնուած մի խաչքարի վրայ⁵⁷ եւ Առաքելոց Եկեղեցու գաւթի խաչքարի վրայ (Ժ-ԺԳ դարեր)⁵⁸։ Անգամ Հայաստանում հաստատուած որոշ այլազգիների զինանշանը եւս եղել է արծիւը, ինչպէս, օրինակ, ԺԲ դարում Ամիդը նուաճած մահմեդականներինը⁵⁹։ Ի վերջոյ, ըստ ԺԷ դարի մատենագիր Մինաս Համթեցու վկայութեան, հայոց թագաւորական տներից մէկին նշանը եւս արծիւ էր⁶⁰։

Շարունակելով Մաթեոսեանը գրում է, որ Գեղարդի վանքում պատկերուած Պաղարակեանների զինանշանը, որտեղ արծուի հետ միասին կան նաեւ երկու առուներ եւ ցուլի գլուխ, իր յորինուածքով նոյնանում է Դսեղի զիւղամիջի եկեղեցու վրայ պատկերուած Մամիկոնեանների զինա-

նշանին, որն արծուից բացի, ըստ Մաթեոսեանի, շունի պահանջը առիւծներ (պահապանուել է ձախակողմինը) Այդ զուգադիպութիւնը նոյնպէս Հաստատում է երկու տունների ընդհանուր ծագումնաբանութիւնը (էջ 98)⁶⁵: Իրականում, Դսեղի քանդակում պատկերուած է ո՛չ թէ առիւծ, այլ՝ սլացիկ եղնիկ⁶⁶, ինչը յստակ երեւում է նաև Մաթեոսեանի գրքում գետեղուած յուսանկարից⁶⁷:

Քաղաքականների զինանշանի եւ առիւծապատկերների հետ կապուած Մաթեոսեանն ընկնում է նաև այլ թիւրիմացութիւնների մէջ: Օրինակ, ելնելով նրանից, որ Գլաձորը Քաղաքականների իշխանութեան մշակութային կենտրոններից մէկն էր՝ նա 1318ին այնտեղ գրուած Եսայի Նշեցու Աստուածաշնչում Մարկոսի աւետարանի խորանի վերնամասում պատկերուած թեւաւոր առիւծները համարում է Քաղաքականների զինանշան⁶⁸: Մինչդեռ, տուեալ դէպքում դրանք Մարկոս աւետարանի խորհրդանշանն են: Նոյն թեւաւոր առիւծը պատկերուած է նաև նոյն անուանաթերթի սկզբնաստուում, միւս աւետարանիչների խորհրդանշանների հետ մէկտեղ, իսկ առիւծների գլուխները նկարուած են խորանի աջ ու ձախ կողմերից, քառանկիւնի շրջանակների մէջ: Արուեստագիտութեանը հանրալայտ իրողութիւն է, որ Մարկոսի աւետարանի անուանաթերթում կամ աւետարանի պատկերի կողքին շատ յաճախ պատկերուում էր նաև նրա խորհրդանիշ առիւծը (յաճախ թեւաւոր, երբեմն՝ ոչ)⁶⁹: Մարկոս աւետարանի խորհրդանիշ առիւծը, միւս աւետարանիչների խորհրդանիշների շարքում, հանդիպում է նաև բարձրաքանդակներում⁷⁰, ինչպէս նաև աւետարանների կազմերի վրայ⁷¹ եւն.:

ՅԱՂԲԱԿԵԱՆՆԵՐԻ ԱՐՑԱԿԵԱՆ ԾԱԳՄԱՆ ՏԵՍԱԿԷՏԻ ԵՐՁԱՆՑՈՒՄԸ

Հարցի քննարկումների ժամանակ, Մաթեոսեանի կողմից լիովին անտեսուել են նաև մի շարք ուսումնասիրողների կարծիքները, ըստ որոնց՝ Քաղաքականները ընկն արցախցի (խաչնեցի) են, Առանչահիկների մի ճիւղ եւ Քաղաքական տունանունն էլ ստացել են յետոյ՝ ժ. դարում լիշատակուող Քաղաքակի անունից⁷²: Հարկ է նկատել, որ հայ միջնադարեան պատմիչները միայն նշել են Քաղաքականների խաչնեցի լինելը, ոչինչ չասելով նրանց Մամիկոնեաններին ազգակից լինելու մասին⁷³: Այս առումով յատկապէս ուշադրաւ է Պոռչ իշխանին ժամանակակից եւ նրան պատկանող Ալքիվանդում ժԳ. դարում գործունէութիւն ծաւալած մատենագիր Մխիթար Ալքիվանեցու մի հազորդումը, որը կարծես մտացել է աննկատ: Նախ նշելով, որ «Լասակ՝ որդի Հաղբակայ եւ երեք որդիքն իւր՝ Պապաբն, Մկղէմն եւ քաջն Պոռչ՝ եկեալ ի Քաչնետը»⁷⁴, պատմիչը քիչ անց գրում է. «Փոխեցան ի Քրիստոս աշխարհաշէն իշխանքն Պոռչ հարկազն եւ Սաղուն

Արծրունի»⁶⁵։ Իսկ Արցախի տոհմերի Համար, «Հայկազն» անուանում էին Առանշահիկներին⁶⁶։ Որ տոհմը Պաղարական տոհմանունը իրօք ստացել է յետագայում, Պաղարակի անունից - այնպես ինչպես Պոռչի անունից՝ Պոռչեան տոհմանունը - երևում է նաև Նրանից, որ վաղ շրջանի աղբյուրները նման տոհմ չգիտեն, ինչպես նաև, «յազգէն Պաղարակա եւ Պոռչա» արտասայտութիւնից, որն, ինչպէս կը տեսնենք ստորև, Հանդիպում է այլ տոհմի ներկայացուցիչների ինքնանուանումներում։ Համանման մեւտով Պոռչ իշխանն իրեն անուանում է- «ես Պոռչ որդի Վասակա յազգէն Պաղարակա»⁶⁷։

Պաղարակեանների վաղ ներկայացուցիչներից վերոյիշեալ Դէնի մասին եւս վկայում է նրա խաչնիցի լինելը, ինչին զարմանալիորէն անտեղեակ է Մաթեոսեանը։ Ըստ նրա, «զարդ չէ, թէ երբ եւ որտեղից է եկել Դէնը Հարանը, որտեղ կային տեղական իշխաններ։ Ստ. Օրբիտանի ժոռ արձանագրուած է միայն նրա ներկայութեան փաստը»⁶⁸։ Հեղինակէ ուշադրութիւնից վրիպել է նոյն պատմիչի մէկ այլ հաղորդումը, ըստ որի Դէն Պաղարակեանը բնակուած էր Պաղեանում⁶⁹, ինչի հետեւանքով էլ նա փորձուած է Դէնի Հայրենիքը պարզել ենթադրութիւններով։

«ՊՈՌՇԵԱՆ» ՏՈՂՄԱՆՈՒՆԸ

Հանրայայտ այս տոհմանունն անդրադառնալով Մաթեոսեանը գրում է- «Պէտք է նշել, որ «Պոռչեան» ազգանունը արհեստական է. այն շրջանաւարտեան մէջ է դրել Յովսէփեանը Պոռչեանք կամ Պաղարակեանք աշխատութեան հրապարակումով։ Պոռչեան տան ներկայացուցիչները ժԳ.-ժԴ. դ.դ. աղբյուրներում յիշատակուած են որպէս «Պաղարակեանք» կամ «Հաղարակեանք» (էջ 97)։

Պարզապէս զարմանալի է, որ նման բան է ասուած, ինչն այս կամ այն մեւտով նշուել էր նաև Մաթեոսեանի նախորդ աշխատութիւններում։ Յովսէփեանը սոյն աշխատութեան առաջին հատորը հրապարակել է 1928ին, մինչդեռ այս տոհմը՝ Պոռչ իշխանի անուամբ՝ Պոռչեան ազգանուամբ, վկայուած է դրանից դարեր առաջ, Դեռեւս ժԸ.-ժԹ. դարերի Հայ ազատագրական զործիչ Իսրայէլ Օրին բազմաթիւ թղթերում ներկայացուած է որպէս Պոռչեան տոհմի ժառանգ. Հննց այլ ազգանուամբ։ Նշուած է, որ նա «սերում է Պոռչեան իշխանների տոհմից» (i.e. *familli kniazei Broschenskikh (Broschensium)*) կամ, որ նա «ի տոհմէ Պոռչ իշխանի»⁷⁰։ ժԸ. դարի սկզբում յիշուած է Դանիէլ վարդապետ անունով մի անձնաւորութիւն, «որ է ցեղէն իշխանաց իշխան Պոռչ իշխանի», իսկ մի արձանագրութիւնում նշուած է, «որ է սայ ի շառաիղէն Պոռչ իշխանին»⁷¹։ ժԷ. դարի Գեղարդի վանքի մի պահարանի վրայ նշուած է, որ այն պատ-

բաստել է տուել «Դաւիթ անարժան Հարեղէս, ազգաւ Պոսեցցի»⁷⁵, իսկ մի պահարանի վրայ վանքի առաջնորդն իրեն անուանում է «յազգէն Խաղբակա եւ Պոռոշ»⁷⁶։ Մի յիշատակարանում, վանքի առաջնորդն անուանում է «ի մեծ եւ յազատ իշխանաց տունէ, ի դաւակէ եւ ի թոռանց մեծին Պոռոշ»⁷⁷, ժՁ. դարի մի յիշատակարանում նշում է՝ «պարոն եղբարցն ի յոց եւ Հարցն Պոռուշանց տունին»⁷⁸։ Աւելի վաղ՝ 1688ին, այսինքն՝ Պոռոշից ձօտ 200 տարի յետոյ, «թոռն մեծին Պոռուշայ է կոչուած Գեղարդի Բարսեղ եպիսկոպոսը»⁷⁹։ Իսկ 1676ի մի յիշատակարան թուագրուած է «ի յահարեպիսկոպոսութեան ... տէր Յոհաննիս ... թոռին մեծին Պոռուշայ ... եւ ... ի պարոնութեան մերոյ նահանգիս մեծագգի եւ երեսելի իշխանաց իշխողի եւ բարեհաւատ պարոն Ջումին՝ թոռին մեծին Պոռուշայ՝ ասպարապետին Հարց»⁸⁰։ Տունը Պոռոշ իշխանի անուամբ է հանդէս գայիս նաեւ ժԳ. դարի մի յիշատակարանում գրուած «ի տեղոս տէրութեան՝ թոռանց մեծին Պոռուշայ Ամիր Հասանա եւ Ջումայի»⁸¹։ Վերջիններս, սակայն, Պոռոշի թոռնորդիքն են՝ ժԳ. դարի վերջում Ստեփանոս Եպիսկոպոս Օրբելիանի գումարած մի ժողովի կազմած թուղթը ստորագրուած է՝ «Մեք մեղուցեալ ծառայքս Աստուծոյ՝ Պապաքս եւ Էալի, որդիք բարեպաշտ իշխանին Պոռուշ»⁸², որտեղ սակայն Էալին Պոռոշի թոռն է եւ ո՛չ որդին Բուրբ այս ղէպքերում Պոռոշ անունը հանդէս է գայիս իրրեւ ազգանուն։

Յովսէփեանը՝ Հիմնուելով այս եւ այլ տուններից օրինակների վրայ, համոզելի կերպով գրում է. «յաճախ է պատահում արձանագրութիւնների եւ յիշատակարանների մէջ, որ շորդիք կամ «թոռունք» այսինչի կամ այնինչի ազգանուն կամ տունի նշանակութիւն ունին»⁸³։ Նոյն բացատրութիւնն է իրաւամբ տուել նաեւ Հայագէտ Լեւոն Խաչիկեանը՝ 1676ին յիշուած իշխան Ջումայի մասին բնագիրը մեկնարանելով «թոռ մեծին Պոռուշայ՝ իմա՛ Պոռոշան տունից»⁸⁴։

Մինչեւ Յովսէփեանի Պոռոշեանք կամ Խաղբակեանք աշխատութեան Հրատարակումը, այս տունի նկատմամբ «Պոռոշեան» ազգանուն կիրառել են նաեւ Հ. Ղևոնդ Վրդ. Ալիշանը, Մաղաքիա Աբջ. Օրմանեանը, Կարապետ Եպս. Տէր-Մկրտչեանը եւ այլ հետազոտողներ⁸⁵։ Տունը այդպէս են անուանել նաև Յովսէփեանի աշխատութիւնը գրախօսող Աղոնցը⁸⁶, նաև յետագայ բազմաթիւ ուսումնասիրողներ։ Մաթեւոսեանը եւս այս տունին նուիրուած իր յօդուածների վերնագրերում դրա անունը նշում է Պոռոշեան ձևով⁸⁷։

Տունի այս անուանումն առաջացել է ի պատիւ ժԳ. դարի իր ականաւոր ներկայացուցիչ, Պոռոշ մականունամբ յայտնի Հասան իշխանի, որն իր

քաջութեամբ ու բաշխարհաչէն՝ գործունէութեամբ այնքան էր հռչակուել, որ նրա անուան շուրջ հիւսուել են աւանդութիւններ ու հեքիաթներ⁹⁸։ Նա զօգարանուել է, պատմական երկերից գատ, նաեւ տաղերում⁹⁹։ Նրա անուամբ են կոչուել նաև տեղանուններ (օրինակ, «Պուռչի կապ» կիրճը Վայոց Ձորում¹⁰⁰), նաև տուն ինքը՝ Պաղարականին զուգահեռ։

ԳՈՒՇԱՐ-ՊԱՂԱԿ ԱՆՃՄԱՆ ՎԱՐԿԱՄԸ

Այնուհետև, հետեւելով խորհնացուն, Մաթեոսեանը ներկայացնում է Հայկի սերունդների տոհմածառը մինչև Գուշար՝ Հայկ-Արամանեակ-Արամայի-Շարա-Գուշար եւ գրում. «Պորենացու հաղորդմամբ Գուշարը եւ նրա զաւակները Հայաստանի մէջ Արշակունեաց հարստութեան հիմնադիր Տրդատ Ա.ի (Վաղարշակի) ժամանակ տիրում էին Գուգարքի հարուստին մասին» (էջ 98)¹⁰¹, որից յետոյ շարունակում է. «Մեր կարծիքով, Գուշարը նոյն Պաղ (Պաղարակ) անձնանունն է, քանի որ բաղաձայնները ըստ արտաբերման տեղի կազմում են հակադրական զոյգեր։ Մինևոյն շարքում կարող են միաւորուել արտաբերութեամբ ձուռ հնչիւնները Հայերէնում ըստ արտաբերման տեղի առանձնացում են շարքերը ըստ արտաբերման եղանակի հակադրական զոյգեր են՝

Էշ-խ (չաղ-խաղ, շաշ-խաշ, շեղ-խեղ), գ-ղ (խո-տեղ), իւ-ւ (վախ-վաւ)։
«Հակադրական զոյգեր են կազմում նաև ձայնաւորները, դրանցից է աու հակադրութիւնը (տար-տուր, սար-սուր) եւն»։

«Հակադրութիւնների օրինակութեամբ Գուշար) անունը ձեւափոխում է «Պաղ» անուան, Գուշարից առաջանում է Պաղարակը Եթէ ճիշդ է մեր առաջարկած ստուգաբանութիւնը, ապա Պաղարականները նոյն Գուշարեաններն են եւ սերում են Հայկից» (էջ 98)։

Ապա, Մաթեոսեանը նշում է, որ ազգանունան Գուշարեանից Պաղարականի փոփոխումը, անշուշտ, տեւել է երկար ժամանակ եւ ժողովրդագիտական աւարտուել է Գ-Ն- դարերի սահմանադիմին։

Այստեղ անուանի է մնում բրակչի առաջացումը, կամ բարձի վերափոխումը բրակչի՝ Գուշար(եան)-Պաղարակ(եան) անցման մէջ։ Սակայն առաջարկուած Գուշար-Պաղ անցումն անհիմն է։ Այս անցումը հիմնաւորելու համար հեղինակն այստեղ փորձում է յնուել լեզուարան Ամայիա Պաղարեանի ժամանակակից Հայերէնի Հնչոյթաբանութեան աշխատութեան վրա։ Սակայն, ինչպէս դա երևում է զբոյժ վերնագրից, մէջբերուած հնչոյթային հակադրական զոյգերը վերաբերում են ժամանակակից Հայերէնին եւ ո՛չ թէ դասական գրարարի կամ նախամաշտոցեան ժամանակաշրջանին։ Միւս կողմից, Պաղարեանը բերուած օրինակներով ցոյց է տալիս, որ ո՛չ թէ դրանք ժամանակի ընթացքում կարող են մէկը միւսի ձեւափոխուել, այլ դրանք առանձնացնում է միայն ըստ արտաբերման ե-

դանակի եւ տեղի⁹³։ Վերջիններս յօդուածագրի առաջարկած ստուգարանութեան հետ որեւէ կապ չունեն⁹⁴։

Գուշարեան ազգանուամբ տուն ընդհանրապէս վկայուած չէ։ Խորենացին, որի վրայ է յենուել Մաթեոսեանը, նշում է Հայկի սերունդներից առաջացած տունների մասին - այդ թւում նաեւ Գուշարից սերունւոց Աշոցեան տունի մասին⁹⁵ - ոչինչ չի նշում Գուշարից Խաղրակեանների սերունւոց մասին, որոնք, ըստ Մաթեոսեանի, Ե. դարում արդէն գոյութիւն ունէին այս ազգանուամբ Խորենացին, ինչպէս եւ վաղ միջնադարեան որեւէ աղբիւր, Խաղրակեան անուամբ տուն բոլորովին չի ճանաչում⁹⁶։

ՏԱԵՒՐ-ՁՈՐԱԳԵՏՈՒՄ ՄԱՄԻԿՈՆԵԱՆՆԵՐԻ ՏԻՐՈՅԹՆԵՐԻ ՎԱՂԵՄՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Ապա Մաթեոսեանը գրում է, որ Գուշարի ժառանգական տիրոջ Գուշարի Հարուային մասը՝ Տաշիր-Ձորագետը, միանգամայն հնարաւոր է, որ «հնագոյն ժամանակներից Մամիկոնեանների ժառանգական սեփականութիւնն էր, շատ աւելի վաղ, քան մեզ յայտնի Դսեղի իշխանութիւնը։ Երկրամասի այսօրուայ տեղանուններից մի քանիսը կապուած են Մամիկոնեան-Խաղրակեան տունական անձնանունների հետ։ Դրանցից են Հաղբատ, Դսեղ (աղակաղուած Խաղբ), Ճոճկան-(Ջոջիկ), Ջաջուռ եւ այլն» (էջ 100)։ Հնագոյն ժամանակներից Մամիկոնեանների կամ Խաղրակեանների երբեւեցէ այստեղ տիրոջները ունենալը մի ենթադրութիւն է, որը չի հաստատուում Աղբիւրներում, ընդհակառակը, վաղ շրջանի համար այստեղ միայն վկայութիւն կայ մէկ այլ՝ Տաշրաց տունի գոյութեան մասին⁹⁷։ Այն, որ այստեղ հաստատուած Մամիկոնեանները իրականում Տաջի մի ճիւղն են՝ եզրակացւում է Սանահինի վանքի մի արձանագրութիւնից, որում Համազասպեան-Մամիկոնեանները նշում են, որ նուիրել են «զմանթշա կէսն ի մեր Հայրենեացս, ի մեր Հոգս Տաջս՝ ի Սանահինս՝ մեր մեռելոցն Հոգոյն եւ մեր արեւշատութեան»⁹⁸։

Ինչ վերաբերում է այս շրջանի տեղանունների լրիւ ազատ ստուգարանութիւններին, Հաղբատի բազմաթիւ արձանագրութիւններում եւ կամ այլ աղբիւրներում որեւէ հաստատող վկայութեան բացակայութիւնը անհիմն է դարձնում Հաղբատ անունը Խաղրակեանների հետ կապելը։

Խաղբ-Դսեղ լեզուական անցման անհաւանականութիւնը մի կողմ թողնելով՝ նշենք, որ Դսեղ անունը ստուգարանում է որպէս «դուրս տեղ», ինչը գիւղին տրուել է իր զատուած դիրքի պատճառով⁹⁹։ Ճարտարպետ Փառնիկ Շախեանը համոզելի կերպով ցոյց է տուել, որ «դրա զուգահեռը կարող է լինել Հաղպատի սահմաններից դուրս գտնուող Կայան ամբոցի եկեղեցու Դսեղան (Դրսեղանք) անուանումը»¹⁰⁰։ Որ այս

ստուգարանութիւնը միանգամայն ճիշտ է՝ երեւում է նաև Դսեղ գիւղի անուան նախկին տարրերակներից մէկից՝ «Դրսեղ»¹⁰⁰։

Իսկ Ճոճկանը կրում է Քարթլիի Վախթանգ Ա. Գորգասալ թագաւորի կողմից 482ին սպանուած, Գուգարքի բղեշխ, Աշուշախ որդի, կրօնափոխ Վազգէնին փոխարինած եղբոր՝ Զոջիկի անունը։ Զոջիկը, լինելով շերմնուանդ քրիստոնեայ, իր Հարսի՝ նահատակ Ս. Եուշանիկի շիրիմի վրայ վկայարան կառուցեց, իսկ իր նստավայր գիւղը՝ ներկայիս Ճոճկանը, իր անունով կոչուեց Զոջկանց¹⁰¹։

ԽԱՂՐԱԿԵԱՆՆԵՐԻ ՏԱՅԲՈՒՄ ՏԻՐՈՅԹՆԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՏԵՍԱԿԷՏԸ

Ապա Մաթեոսեանը Խաղրակեաններին փորձում է կապել նաև Տայքի Հետ եւ Նշում. «Մեր կարծիքով ականայտ է Հնագոյն ժամանակներում Ճորոխ գետի աւազանում, տափաների Հարեւանութեամբ բնակուող Խալքր ցեղի անուան նմանութիւնը «Խաղր» տոհմանուան Հետ. «Ինչ ձայնաւորի սեղմուելով մնում է «Խալք» անունը, որը նոյն «Խաղր»ն է։ Այլ դէպքում Խաղրակեանների տիրոջները միջնադարում պէտք է գտնուէին Տայք նահանգում, որը պատկանել է Մամիկոնեաններին» (էջ 100)։ Ըստ այս տրամաբանութեան, կամայ թէ ակամայ դուրս է գալիս, որ Խաղրակեանները սերում են խալքներից¹⁰², ինչը հակասում է Հեղինակի եզրայանգումներին։

Նման մօտեցման դէպքում թերեւս ակելի Հեշտութեամբ Հարկ է յետազոտւած լիշատակուած Խաղարեան տոհմանունն էլ խալքերի Հետ առնչել, կամ Խաղրակեաններին կապել մի շարք այլ վայրերի Հետ եւս։ Օրինակ, Աղբակ գաւառը երբեմն նաև լիշատակում է Հաղբակ եւ Խաղբակ ձեւերով¹⁰³, ինչի նմանութիւնը քննարկուող տոհմանուանը առաւել ականայտ է։

Մէջրերուած վերջին նախադասութիւնից Հետեւում է, որ, ըստ Մաթեոսեանի, Հնագոյն ժամանակներից Գուգարքի Հարաւում բնակուող Խաղրակեանները միջնադարում էլ տիրոջներ են ձեռք բերել նաև Տայքում եւ ազդուել վերջինիս Հարեւանութեամբ Հնագոյն ժամանակներում բնակուած խալքների անուանումից՝ դեռ մի կողմ թողած ժամանակագրական մեծ անջրպետը։

Այսպիսով, մի դէպքում ստացւում է, որ Խաղրակեան անուանումն առաջացել է Գուշարից՝ Գուշ-Խաղ անցմամբ, մի այլ դէպքում՝ որ այն կրել է խալքների անուան ազդեցութիւնը։ Իր նախորդ մի աշխատութիւնում Մաթեոսեանը եւս երկու այլ բացատրութիւն է տալիս։ Նա նշում է, որ Խաղրակեան-Հաղբակեան անուանումը «ճազումնարանական կապ ունի գինանշանի գլխաւոր բաղադրամասի Հետ։ Երկուսի Հիմքը՝ «Խաղր-

Հաղթք բառն է, Հաղթք նշանակում է լար, թակարդ, խեղք, իսկ «Պաղր-
նակ» կացարների ցեղին պատկանող թռչուն (կարմրասրունք), փոքր
ժարմոպի եւ շատ երկայն ու բարակ կարմիր ոտներով՝ Միւս տեսակի՝
կռուող խաղանակի արուն ունի փետուրների մանեակ, որը ցցում է ան-
հրաժեշտութեան դէպքում։ Մանեակը բացած թռչունը աստիճանաբար
վերածուել է արծուի։ Իր հերթին Պաղրակ (կամ Պաղրնակ) բառը եւ
նրանից առաջացած անունները (ազգանուն, Պախ տեղանուն եւ այլն) մեր
կարծիքով ունեն ընդհանուր արմատ, որը էթնիկական ծագում ունի՝¹⁰⁴
Այսպիսով, այս տուճմանուան մեկնութեան համար հեղինակն առաջար-
կում է չորս բացատրութիւն, եւ նրանցից բոլորը համարում է ընդունելի։

ՄԱՄԻԿՈՆԵԱՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ ՈՒ ՏՈՀՄԱՆՈՒՆԸ

Անուհետեւ, Մաթեոսեանը, վկայակոչելով իշխան Միքայէլ թուման-
եանին, յիշատակում է մ.թ.ա. Ա. դարի եւ մ.թ. Ա. դարի Վասակ անունը
կրող երկու սպարապետերի, յայտնելով, որ նրանց մասին Հաղորդում են
մ.թ. Ա.-Բ. դարերի հռոմէացի պատմիչ Տակիտոսն ու մ.թ. Բ. դարի յոյն
պատմիչ Արրիանոսը։ Սակայն, այստեղ նա պարզապէս ամբողջովին
կրկնում է թումանեանի սխալը՝ Մ.թ.ա. Ա. դարի Վասակի (Օսակէս) մա-
սին իրականում յիշատակում են մ.թ.ա. Ա. դարի հռոմէացի հռետոր Յի-
ցերոնն ու մ.թ. Բ.-Գ. դարերի հռոմէացի յոյն պատմիչ Դիոն Կասիոսը՝¹⁰⁵
Մ.թ. Ա. դարի Վասակի մասին յիշատակում է Տակիտոսը՝ (եւ ոչ թէ Ար-
րիանոսը՝ համաձայն թումանեանի¹⁰⁶), իսկ Արրիանոսը յիշատակում է
Վասակ անուամբ արդէն երրորդ մի զօրավարի, որը գործել է աւելի ուշ՝
մ.թ. Բ. դարում եւ հռոմէացիների հետ միասին հայկական մի զօրավոկա-
տով մասնակցել ալանների դէմ մղուող պատերազմին՝¹⁰⁸

Փոքր անց, փորձելով մեկնաբանել Մամիկոնեանների ծագման աւան-
դութիւնը ներկայացնող Պորենացու Հարց Փատմութեան «Եթէ՛ Ուստի
Եւ Ջիւրդ Ազգ Մամիկոնէից» գլուխը, Մաթեոսեանը գրում է. «Նշուած
գլխի տեղեկութիւնը կարելի է մեկնաբանել երկու տեսակիւնից. - 1. Կամ
անհրաժեշտ էր հիմնաւորել Մամիկոնեանների արքայական ծագումը» (էջ
101)։ Եւ նա վերջինս համեմատում է Բուզանդի տեղեկութիւնների հետ։
Սակայն, եթէ Բուզանդը՝ այո՛, ապա Պորենացին Մամիկոնեաններին վե-
րագրում է ո՛չ թէ արքայական, այլ առաջնակարգ իշխանական ծագում՝
նրանց նախնուն անուանելով ճենաց թագաւորի «գայեակորդի», «մեծ նա-
խարար»¹⁰⁹։ Հարկ է նշել, որ այդ տարբերութիւնը նաեւ յատուկ ընդգծ-
ուել է թումանովի կողմից՝¹¹⁰ Ապա, շարունակելով մեկնաբանութիւնը,
Մաթեոսեանը գրում է. «Չ. Հնարաւոր է, որ Մամիկոնեան-Պաղրակեան
տուճի որեւէ ներկայացուցիչ Հայաստանից անցել է Ճենաստան, իսկ

բաւական ժամանակ անց նրա ազգակիցներ Մամիկն ու Կոնակը եկել են Հայաստան, որը եւ ընկալուել է որպէս «ճենացի» Վճարների ժամանում Հայոց երկիր» (էջ 101): Մամիկոնեանների շրջապատյոյ մասին նման անհաւանական կռահումով էլ Հեղինակն այստեղ այնուամենայնիւ փորձում է արդարացնել աւանդութիւնը:

Ապա, ըստ Մամիկոնեանի, Մամիկոնեաններն իրենց հանրաճանաչ այս ազգանունը «կրել են միայն սկսած Դ- դ- առաջին քառորդից: Ազգանունան փոփոխումը տեղի է ունեցել ի պատիւ Տրդատ Գ- Արշակունի թագաւորին ժամանակակից Մամիկոնեան տոհմի նահապետի, որին պատմիչը անուանում է «ճենագնեայն Մամզոն» (էջ 101-102): Նա գտնում է, որ «Յորենացու Վամզունը» նոյն սպարապետ Արտաւազը Մամիկոնեանն է, որին յիշատակում է Ազատագրողը» (էջ 102)¹¹¹: Ըստ Մամիկոնեանի, տոհմը անուանակոչուել է Մամիկոնեան 309ից մինչեւ 330, որի ընթացքում էլ, ըստ նրա, տեղի է ունեցել Տարսնի անցումը Սելուկիներից Մամզունին՝ համաձայն Յորենացու նկարագրութեան: Ապա նա գրում է. «Ի՞նչ ազգանուն է կրել տոհմը մինչ այդ՝ պէտք է պարզի առաջիկայ ուսումնասիրութիւնը: Մեր կարծիքով այդ ազգանունը եղել է Հաղբակեան (Սաղբակեան)» (էջ 102):

Յաւոք, այս Հատուածում եւս տեղ են գտել անհիմն եւ հակասական մտայնումներ: Օրինակ, տոհմը չէր կարող Մամիկոնեան կոչուել մատնանշուած 309ից յետոյ, քանի որ, ինչպէս պարզորոշ երեւում է, «Վարքճի յունարէն եւ արաբերէն թարգմանութիւններից, մինչ այդ յիշատակուած է Արտաւազը Մամիկոնեանը, եւ Մամիկոնեան տոհմանունն ընդհանրապէս: 301ին Հայոց մերտութեան առիթով Տրդատ Գ- թագաւորի կանչին ներկայացած նախարարների թւում հինգերորդը նշուած է Վճարների նախարարը՝ սպարապետը, որին էին նմարկուած Հայոց ամբողջ հեծելազօրն ու հետեակը եւ միշտ Հայոց թագաւորի հետ էր լինում»: Գրիգոր Լուսաւորչին կեսարիա ուղեկցողների խումբը զոյջաւորում էր Արտաւազը՝ Մամիկոնեանի նախարարը, ամբողջ Հայաստանի սպարապետը: Հայաստանում Լուսաւորչի կողմից նորանշանակ եպիսկոպոսներից մէկն ուղարկուած է սպարապետական տունը, որը պատկանում էր Մամիկոնեանների տոհմին»¹¹²: Բացի այդ, դա հակասում է նաեւ Տիգրան Բ. Մեծի (մ.թ.ա. 96-56) դորաձայր Մանկայտի¹¹³ Մամիկոնեան լինելու մասին Աղոնցի տեսակէտին, ինչն այս յօդուածում յիշատակում է նաեւ Մամիկոնեանը: Աղոնցն Վճարայտան անունը համեմատում է Մամիկն հետ՝ գտնելով, որ իր տեսակէտի հաստատման դէպքում, «հարկ կը լինի Մամիկոնեանների քաջարի տոհմի սկզբնաւորումը ետ տանել մինչեւ Տիգրան Մեծի դարաշրջանը»¹¹⁴:

Եթէ ընդունում ենք Մանկայտի տոճական պատկանելութեան մասին համոզիչ այս դրոյթը, ապա այդ անուանածերը եւ նրա նոյնացումը Մամիկի Հետ ինքնին ենթադրում են մինչեւ մ.թ. Դ. դարը Մամիկոնեան տոճանուան գոյութիւնը:

Խորհնացու լիշատակած Մամզունի նոյնացումը սպարապետ Արտաւազդ Մամիկոնեանի Հետ եւս ընդունելի չի կարող լինել, քանի որ ըստ Վարքաի յունարէն եւ արաբերէն թարգմանութիւնների եւ, ինչպէս կարելի է դատել Բուզանդի եւ Ժ. դարի հայ մատենագիր Մեսրոպ Երէց Վարցձորեցու տողատակում վերոնշեալ տեղեկութիւններից, Տրդատ Գ. Մեծի ժամանակ սպարապետ է եղել Արտաւազդ Մամիկոնեանը, իսկ, ըստ Խորհնացու՝ Արտաւազդ Մանդակունին: Ուստի Մամզունին չենք կարող Արտաւազդի Հետ նոյնացնել անգամ ըստ Խորհնացու: Վերջինս նոյնիսկ Մամզունին սպարապետ չի անուանում: Միւս կողմից, Արտաւազդ Մամիկոնեանի մասին լիշատակող որեւէ աղբիւր ակնարկ իսկ չունի նրա Մամզուն կոչուելու, Մամիկոնեան տոճի անուանադիր լինելու եւ անգամ Տարօնում Սիլուանների կալուածքին տիրելու մասին, որով Հնարաւոր լինէր արդարացնել նման նոյնութիւնը:

Մամզունին պատմականացնելու եւ նրան տոճի անուանադիր տեսնելու Մաթեոսեանի այս փորձը նաեւ Հակասում է իր կողմից յօդուածի սկզբում մէջբերուած Մամզուն անուան՝ Մամկոն (Մամիկ-կոնակ) զոյգ անուններից իրրեւ մի անձի անուն ընդունուելու (ինչը յատուկ է ժողովրդական վէպին) մասին ականաւոր Հայագէտ Մանուկ Աբեղեանի իրաւացի դնահատականին¹⁰⁵: Ինչ վերաբերում է Տարօնին, Խորհնացու նշած ժամանակաշրջանում նրա անցումը Մամիկոնեաններին արժանահաւատ չէ¹⁰⁶:

Իսկ ի՞նչ է ստացւում մէջբերուած վերջին նախադասութիւնից: Վերելում, Մաթեոսեանը նշում էր, որ «Խաղբակեանները ծագում են Մամիկոնեան տոճից, նրանց ճիւղերից մէկն են, եւ ԺԲ-ԺԴ. դդ. կոչուել են «Խաղբակեանք» (էջ 97): Այժմ էլ, Հակասելով իրեն, գրում է, որ Մամիկոնեանները Դ. դարից առաջ կոչուել են Խաղբակեան՝ սակ է թէ Մամիկոնեաններն են Խաղբակեանների մի ճիւղ: (Մի կողմ ենք թողնում նաեւ այն չփոթը, ըստ որի Հեղինակը վերելում գրում էր, թէ Գուշարեան ազգանունան փոփոխումը Խաղբակեանի մօտաւորապէս ակարտուել է Դ-Ե. դարերի սահմանադրին, իսկ այժմ էլ կարծիք է յայտնում, որ Դ. դարի առաջին քառորդից առաջ Մամիկոնեաններն արդէն կրում էին Խաղբակեան ազգանունը):

Յօդուածում տեղ են գտել նաեւ այլ, առանձին, մերժելի դրոյթներ, որոնք, սակայն, զանց առնելով, հարկ է անդրադառնալ յօդուածի վերնագրին: Այն դժուար է Համարել ճիշտ ընտրուած. Խորհնացին Խաղբակեան

անուամբ տոհմ չի ճանաչում, որ նրա մասին վկայութիւններ տայ, իսկ Մամիկոնեանների ծագման մասին Հաղորդում է միայն եղած աւանդութիւնը: Վերջինիս Համար Հարկ է խօսել Մամիկոնեանների ծագման աւանդութեան մասին ընդհանրապէս, քանի որ Պորենացոյց բացի, եւ նրանից առաջ, այն Հաղորդում են նաեւ այլ աղբիւրներ¹⁰⁷, իսկ եթէ վերնադրում նկատի է առնում Գուշարի մասին տեղեկութիւնները, ապա Պորենացին նրան այս տոհմերից որեւէ մէկի հետ չի կապում:

Եզրափակելով յօդուածը՝ Հեղինակը գրում է. «Ներկայ ուսումնասիրութեամբ կատարւում է առաջին քայլը Մամիկոնեան տոհմի ծագումնաբանութեան նոր յուսարանման ուղղութեամբ: Համոզուած ենք, որ յետագայ աշխատանքները ի յայտ կը բերեն նոր տուեալներ յօդուած այդ տոհմի բուն Հայկական ծագման» (էջ 102):

Այս դէպքում եւս Հեղինակը չի անդրադարձել վերեւում, տողատակում, ակնարկուած մեր յօդուածին կամ ղեկուցումներին, որտեղ մի շարք փաստերի հիման վրայ փորձել ենք ցոյց տալ, որ Մամիկոնեանների ծագման աւանդութիւնն իրականութեամբ չի Համապատասխանում, եւ որ Մամիկոնեաններն ունեն տեղական Հայկական ծագում:

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍԲ ՄԱՄԻԿՈՆԵԱՆՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ ՄԵՐ ՏԵՍԱԿԷՏԻ ՇՈՒՐՁ

Թիրեւո աւելորդ չէ այստեղ եւս Հպանցիկ, մի քանի բառով նշել Մամիկոնեանների մասին մեր տեսակէտը:

Նախ, Հարկ է միմեանցից տարանջատել Մամիկոնեանների ծագման եւ ճենաստանի տեղորոշման խնդիրները, որոնք նոյնացում են մի շարք Հետազոտութիւններում:

Կարեւոր է նախ պարզել, թէ Մամիկոնեանների աւանդութիւնը որքանով է Համապատասխանում իրականութեանը: Մամիկոնեանների արտաքին տեսքի, տոհմական անձնանունների, սովորութիւնների, զինանշանի, կայրուածքների տեղանունների, աւանդութեան մէջ յիշատակուած ներգաղթի ժամանակի եւ տարրեր անունների, ինչպէս նաեւ Մամիկոնեան տոհմանուան քննութիւնից պարզւում է, որ Մամիկոնեանների աւանդութիւնը իրականութեամբ չի Համապատասխանում: Հաշուի առնելով յօդուածի սահմանները՝ դրանց քննութեան ներկայացումն այստեղ զանց կ'առնենք՝ ստորեւ անդրադառնալով միայն զինանշանի խնդրին:

Մի շարք փաստերից պարզ են դառնում նաեւ աւանդութեան առաջացման պատճառները: Մամիկոնեաններն, ինչպէս մի շարք այլ տոհմեր, իրենց միտումնաւոր վերադրելով օտար բարձր ազնուական ծագում, ձգտել են էլ աւելի բարձրացնել իրենց կշիւրը, պատիւն ու Հեղինակութիւնը: Հարկաւոր էր ազդեցիկ երեւալ ո՛չ միայն ունեցած դիրքով ու դրա-

դեցրած պաշտօնով, այլև ծագմամբ: Քանի որ միջնադարում ազգութիւնը հիմնականում որոշուած էր ունեցած դաւանանքով, ուստի ազնուական տոհմերն ազատ կերպով իրենց վերադարձում էին նաև օտար էթնիկական ծագում: Ընամարտելով խորթ տարր կարելորդ հնարաւորին չափ պատուաբեր եւ նշանաւոր (հայկական կամ ոչ-հայկական) ծագում ունենալն էր, որ դրեթէ պարտադիր պայման էր առաջնակարգ տոհմերի համար: Բարձր ծագում ունենալու անհրաժեշտութիւնը զգացուած էր յատկապէս միւս տոհմերի եւ անգամ առանձին թագաւորների հետ մրցակցութեան եւ առնակատման ժամանակ: Նման ծագում ունենալը տոհմերի համար անհրաժեշտութեան զէջքում ծառայում էր իրրեւ: Հիմք իրենց դիրքը պաշտպանելու կամ յաւակնութիւններն իրականացնելու համար:

Իսկ ձենաստանը հայ միջնադարեան պատկերացումներում հանդէս է գալիս իրրեւ դրախտային մի երկիր՝ մեծ, հզօր, հարուստ, որտեղ ո՛չ որրե է լալիս, ո՛չ ալլին՝ հոգոց հանուած: Ձենաց երկիրը նկարագրող տարբեր դարերի աղբիւրներն այն պատկերում են որպէս հիւսիս-արեւելեան, քաջատուհիկ եւ գլխաւոր աշխարհ, որտեղ չգիտեն ակնեղէնների ու մարգարիտների հաշիւը: Այնտեղ հասարակ մարդկանց հասու է այն ամէնը, ինչ հայոց եւ այլ ծանօթ ժողովուրդների մօտ թագաւորներն են օգտագործում: Երկիրն առատ է ամէն տեսակ պտուղներով, կենդանիներով, մետաքսով: Այն ամենախաղաղասէր երկիրն է, եւ այնքան հզօր է, որ երբեք ոչ ոքի հպատակ չի եղել: Նման մի երկրից ծագած լինելն արդէն մեծ պատիւ էր համարուելու, եւ Մամիկոնեաններն իրենց սերուած էին համարում այդ հզօր երկրի թագաւորներից կամ առաջնակարգ իշխաններից:

Համեմատութիւնն այլ տոհմերի իրական ծագման եւ դրանց մասին եղած աւանդութիւնների հետ վկայում է, որ միտումնաւոր կերպով ցանկալի ծագում վերագրելը տարածուած երեւոյթ էր: Ազգեցիկ տոհմերի մեծ մասը՝ ներառեալ Բագրատունիները¹²⁸, Արծրունիները¹²⁹, Չաքարեանները¹³⁰ եւն., ունենալով տեղական ծագում, նոյնպէս իրենց վերագրել են համապատասխան օտար, պատուաբեր ծագում: Եւ, ընդհանրապէս, աշխարհում մի շարք ազգերի, տոհմերի եւ նշանաւոր անհատների ծագման մասին միտումնաւոր ստեղծուած աւանդութիւնների բազմաթիւ օրինակներ կան, օրինակ՝ Բիւզանդիայի կայսր, հայկական Մակեդոնական Հարստութեան հիմնադիր Վասիլ Ա-ի (887-888) քաղաքական նորումներինց ելնելով ստեղծուած աւանդութիւնը նրա հայ Արշակունի թագաւորներից սերուած լինելու մասին¹³¹, կամ Հին աշխարհում յոյների գաղութային քաղաքականութեամբ ստեղծուած աւանդութիւնները հայերի, պարսիկների եւ մարերի նախահայրերի յունական ծագման մասին¹³² եւն.:

ինչ վերաբերում է Մամիկոնեան տոհմանուան գոյութեան ժամանակին, մենք առաւել հաւանական ենք համարում տոհմանուան բացատրութիւնից բխող այն մտայնումը, ըստ որի այն կարող էր գոյութիւն ունենալ հնագոյն ժամանակներէջ:

ՄԱՄԻԿՈՆԵԱՆՆԵՐԻ ԶԻՆԱՆՇԱՆԸ

